

L. nifrostic

Large flycatcher
seen here

82 W
W-75.

L. ԱՐՏՉԵԼ

Փոք. 4. ՍԱՐԻԿՅԱՆ



ԴՐԱՄ ՀԱՎԱՐԵԼ




ԿԱՇԱՎ ՎԱՍԻՎ

ՊԵՏԱՐԱՆ

850
5-75

Զրի բարակ շիթն ինչ աներ, չաներ, միշտ կարկաչում ու յերգում եր. դրա համար ել անունը կարկաչող շիթ եր: Առաջին անգամ հայտնվեց հեռու սարերում: Այդ որից մինչև մեր վաննան հասնելը շատ բան տեսավ, շատ բան արագ: Սկզբում դեռ փոքրիկ աղբյուր եր—սանը, սանը, վորովինետի գալիս եր հողի խորքերից, ուր արևի ճառագայթները չեն հասնում: Հողի տակ ճանապարհին մի փոքրիկ փոսիկ մտավ: Այնտեղ մանր քարեր շատ կային: Բայց մեր շիթն արգելքներից վախեցող չեր: Յերգ ու պարով մտավ նրանց արանքը, փոսիկը լցըք: Այնտեղից ել փախչելու հնարը գտավ, լույս աշխարհ դուրս յեկավ, աղբյուր դարձավ: Տեսնելու բան եր, թե սարի գագաթից ինչպես եր ցած գլուխում ու պարծենալով յերգում:



Խոնավ ժայռերը ձեղքեցի,
քարտո փոսիկում քնեցի.
գալիս եմ մութ տեղերից,
կանաչ, ծաղկոտ սարերից.

Ճանապարհին իը նման միքանի շիթերի բնկե-
րացավ, առվակ դարձավ ու ներքի, ներքի եր գո-
զում յերգելով.

Յես վաղում եմ որ, գիշեր,
թէ արեին, թէ հովին.
շատ եմ սիրում յես յերգեր,
ու միշտ վաղել որ, գիշեր:

Յերբեմն խոտերի ու տերեների տակ եր մտնում,
յերբեմն ծառերի արմատներին դիպչում, աղմկում.



յերբեմն հանդարտ հոսում տափարակ դաշտերով.
բարձր խոտերի միջով:

Մի անգամ ել հասավ մի գեղեցիկ, բարձր ժայ-
ռի ու այնաեղից վոր վայր չգլորվեց, փշրվեց, կա-
թիլներ դարձավ, շաղ անցավ: Բայց շուտ իրեն ժո-
ղովեց ու նորից բարակ, բարակ առվակ դարձավ:
Փոքրիկ թռչնիկների ուղածն ել հենց այդ եր: Մեջն
եյին թափվում, լողանում, զովանում: Մեր առվակը
յերգում եր նրանց համար: Թռչնիկներն ել պակսո
չեյին. նրանք ել եյին յերգում, ծլվլում:

Առվակը փոքրիկ նապաստակի համար ել եր
յերգում: Յերգում եր նաև յեղնիկի համար, վոր
միշտ ջուր խմելու յեր գալիս: Ուրիշ շատ վայրի
կենդանիներ ել եյին գալիս՝ նրա յերգը լսելու, նը-
րանով զովանալու:

Ամենի համար ել նա յերգում եր
Յես վաղում եմ որ, գիշեր.
թէ արեին, թէ հովին.
շատ եմ սիրում յես յերգեր,
ու միշտ վաղել որ, գիշեր:



Զինիկներին ել չեր մոռանում, բայց այնքան
մեղմ, այնքան քնքուշ եր յերգում, վոր միայն նրանք
եյին լսում ու հասկանում:

Քանի առաջ եր վազում, մեր առվակն այնքան
ավելի յեր մեծանում: Այնքան մեծացավ, վոր նույն
իսկ ձին չեր կարող անցներ:

Նա այլևս առվակ չեր, այլ զետակ, հետո յել
գետ: Մարդիկ ստիպված յեղան նրա վրայով կա-
մուրջներ դցել: Տափարակ տեղերում գետի վրա
նավակներ, առագաստանավեր յերեացին: Նավակնե-
րից մեկում լիքը յերեխաներ եյին: Նքանք մերկա-
ցան խինդ ու ծիծաղով, շրմփալով ջուրը թափե-
ցին, լողացան:


Շուտով գետի վրա փոքրիկ շոգենավեր ել յե-
րեացին: Տնւ-տնւ-տնւ-նւ-նւ.... գետի յերգն այլևս
առաջվա նման կայտառ ու բարձր չեր: Այս ան-
գամ նա ծանր եր ու դանդաղ.

Մեծանում եմ ու հոսում,
շոգենավեր եմ շարժում.
շոգենավեր եմ շարժում
միշտ ել լիքը մարդկանցով:

Այսպես հոսելով, գետը մի տեղ ել բարձր ու
ժայռոտ ափերի մեջ մտավ: Հենց այստեղ ել մի
զարմանալի բան պատահեց: Նրա առաջը կտրեց մի
բարձր պատ՝ քար ու ցեմենտով քաշած, մի ափից
մյոււրը: Մեր գետը շվարեց. չկարողացավ պատը
քանդել կամ ծակել: Նա հավաքվեց, հավաքվեց ու
փոքրիկ լճակ դարձավ: Մարդիկ այդ տեղն ամբար-
տակ անվանեցին:

Պատը ցածում անցք ուներ, վոր տանում եր գե-
պի մի խողովակ: Այդ խողովակն այնքան լայն եր,
վոր վրայով մի փիղ կարող եր ազատ, համար-
ձակ անցնել:

Գետն այս բանը շհավանեց: Ախր ինչու եյին
իրեն զրկում ազատությունից: Նա սկսեց փնտիփրն-
թալ.



Ի՞նչ եմ անելու հիմա.
իմ բաները բռւրդ դարձան,
ուռչում եմ ու պտափում,
իսկ յես սրտով շատ կուղեմ,
նորից սարից ցած վազել
Բայց չե, ճնարը գտա
թե խողովակն ինձ թռւյլ տա,
հենց նրա մեջ կմտնեմ:

Շեշտակի հոսեց դեպի խողովակը: Այստեղ նորից կարող եր վազել: Վազում եր, վազում շատ ու շատ վերստեր: Դիաներ, վոր իր դեպի վերևն են կանաչ դաշտեր, ծառեր, կովեր, ձիեր... մի խոսքով այն ըոլորը, վորոնց համար նա առաջ յերգում եր:

Զգում եր, վոր այնտեղ, վերևում հազարավոր վոտներ այս ու այն կողմն են շտապում: Զիերը քաշում եյին կառքեր, վագոններ, սայլեր: Զգում եր, թե ինչպես իր վրայով անթիվ ապրանք են դես ու դեն տանում, և զարմանում եր, թե ինչպես ե, վոր նրանք չեն ընդհարվում իրար: Ուշ միայն գլխի ընկափ, վոր ինքը մի մեծ քաղաքի տակ է գտնվում, ու յերգեց:

Դեհ, վազիր, վազիր, վազիր:
լոռում եմ ձայները վոտքի, վոտքի
ու միշտ զարկվող քայլի, քայլի:
գեհ, վազիր, վազիր, վազիր:

Նորից մի սարորինակ բան: Մեծ խողովակներին մանր խողովակներ եյին միանում: Սրանցից մեկը թեքվեց դեպի մի փողոց: Դրանից մի ավելի փոքրն ել՝ դեպի մի տուն, իսկ մի ուրիշ ավելի փոքրիկն ել վեր բարձրացավ այդ տան խողովակով: իսկ դրանից հետո յել պատի խողովակով դեպի վեր:

— Ի՞նչպես, — կհարցնեք դուք:

— Շատ պարզ: Մինչև անգամ այդ տան տանիքն ավելի ցածր է, քան այն ամբարտակը, վորտեղ կանգ առավ ջուրը. հիշում եք: Դրա համար ել ջուրը կարող եր այնքան հեշտ վերև բարձրանար, ինչպես ցած եր վազում:




Վաննայի սենյակում
մի տղա կար: Նա մոտե-
ցավ ծորակին ու պտտեց:
Չուլը ֆշացնելով թափ-
փեց, ցալքու տվավ:

— Այ լավ բան... իսկ
յես լողանալ եյի ուզում,—
ասաց տղան:

Հենց այն ջուրն եր այս, վոր յերգում եր ամե-
նահեռավոր սարերից սկսած: Բլբլում եր, բանի աղ-
բյուր եր. զիլ ու զրնգան ձայն ուներ, յերը սարից
ցած եր գլորվում. շոգենավեր ման ածելիս նրա ձայ-
նը դանդաղ եր ու թույլ. խողովակի մեջ մոմուում
եր քթի տակ. իսկ այժմ վաննա թափվելիս ծիծա-
ղեց ու յերգեց իր վերջին յերգը.

Սարից ցած եմ թռչում յես.
Փողոցի տակ եմ վազում.
Խողովակով եմ բարձրանում,
ու վաննա յեմ լցնում յես:



ԳԻՆԸ 30 ԿՈՊ.



ԼՈՒՅԱՆ Ե ՏԵՍՎՈՒՄ ՀՈԽՀ ԼԺԿ ՍՈՑԴԱԳԼԻԿՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԲԸ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ № 24

Հետուած № 728

Գրառեալիքար № 632 ր.
ակտագրատան Հայպատիզրաֆի 2-րդ տպ. պատ. № 8341

ակտագր

833